

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՏՈՆԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՏԱԼՅԱՆԻ
(1915—1981)



Ապրիլի 24-ին, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվում է Տ. Տոնավագ քահանա Մանտալյանը:

Հանգուցյալը ծնվել է քահանայի ընտանիքում 1915 թվականին Արևմտյան Հայաստանի Իզմիտ քաղաքում: Ավազանի անունով՝ Հարություն:

1921 թվականին ընտանիքով հաստատվում են Ռումինիայի Սուչավա քաղաքում, որտեղ սովորում և ավարտում է միջնակարգ դպրոցը:

1971 թվականին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի ձեռամբ քահանա է ձեռնադրվում՝ հաջորդելով Տ. Գնել ավագ քահանա Մանտալյանին, և նվիրվում Սուչավայի հայոց եկեղեցու հոգևոր ծառայությանը:

1978 թվականի մայիսի 19-ին Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով առաջնորդ արքազանի դիմումին, Տ. Տոնավագ քահանային շնորհում է լանջախաչ կրելու իրավունք՝ նրա անձնվեր ծառայության համար:

Հանգուցյալի վերջին օծումը և թաղման արարողությունը Սուչավայի հայոց եկեղեցում կատարեց առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը՝ աղընթերակայությամբ Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանի:

Հայոց եկեղեցում թաղման արարողությանը ներկա էին ռումին հոգևորականներ, բազմաթիվ հայ և ռումին հավատացյալներ:

Հանգուցյալի աճյունը ամփոփվեց Սուչավա քաղաքի հայոց գերեզմանատանը:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: